

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# Հ Ա Ն Դ Ե Ս

*(Գիտամեթոդական հոդվածների ժողովածու)*

16

ԵՐԵՎԱՆ - 2015

ՀՏԴ 791.43:792  
ԳՄԴ 85.37+85.33  
Հ 311

Լրատվական գործունեությունն իրականացնում է  
«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ»  
պետական ոչ առևտրային կազմակերպությունը

Հասցեն՝ Երևան, Ամիրյան 26  
Գրանցման վկայական՝ N03 Ա 059755, տրված 02.04.2003 թ.

Ժողովածուն տպագրվում է Երևանի թատրոնի և կինոյի  
պետական ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գլխավոր խմբագիր՝ **Լաուրա Մուրադյան** - բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Դավիթ Մուրադյան** - ԵԹԿՊԻ-ի ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ  
**Հենրիկ Հովհաննիսյան** - ՀՀԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր  
**Գրիգոր Օրդոյան** - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Նարինե Սարգսյան** - ԵԹԿՊԻ-ի պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու,  
պրոֆեսոր  
**Գարեգին Զաքոյան** - արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր  
**Անետա Երզնկյան** - կինոգետ, պրոֆեսոր  
**Արմեն Մելիքսեյան** - պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

Թողարկման պատասխանատու՝ **Լաուրա Մուրադյան**

## ՀԱՆԴԵՍ

Հ 311 Գիտական հոդվածների ժողովածու, Եր., «Վան Արյան», 2015, 260 էջ

Գիտական հոդվածների մատենաշարի 16-րդ գիրքը շարունակում է ներկայացնել բուհի դասախոսների գիտամեթոդական աշխատանքները: Ժողովածուում ընդգրկված են նաև երիտասարդ մասնագետների հետազոտական առաջին փորձերը: Ժողովածուն հասցեագրվում է մասնագետներին, ուսանողներին, ինչպես նաև ընթերցողների լայն շրջաններին:

ISBN 978-9939-70-113-4

ԳՄԴ 85.37+85.33

© Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, 2015 թ.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ՆԱՅ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՆԵՏԱԶՈՏՄԱՆ ԷՄՊԻՐԻԿ ԲԱԶԱՆ

Ժամանակակից հայ վավերագրական կինոն զարգանում է՝ նպատակ ունենալով գեղարվեստորեն իմաստավորելու իրականությունը համամարդկային իրողությունների համատեքստում: Այս զարգացումը հիմնականում տեղի է ունենում անհատական նախաձեռնությունների շնորհիվ և անկախ ստեղծագործողների ջանքերով, ինչը, թերևս, կարելի է դիտարկել որպես օրինաչափություն: Այդ գործընթացը, ըստ էության, համակարգված չէ, և դա որոշակիորեն բարդացնում է երևույթի գիտական ուսումնասիրության խնդիրը՝ պատշաճորեն ներկայացնելու համար:

Աշխատելով վերոնշյալ թեմայի ուսումնասիրության վրա՝ հետազոտական աշխատանքի ձևակերպման և կազմակերպման ընթացքում ինձ անհրաժեշտ եղավ ամփոփել այն ողջ էնպիսի նյութը, որը կուտակել է հայ վավերագրական կինոն վերջին 25 տարում: Այդ ընթացքում զաղափար հղացա ստեղծել տեղեկատվական տվյալների բազաներ պարունակող կայք, որը կօգնի նման հետազոտությունների կազմակերպմանն ընդհանրապես: Ֆիլմերի շտեմարանի պարունակության սահմանները որոշելիս նախ պետք է հասկանալ հիմնական՝ «ժամանակակից հայ վավերագրական կինոյի հետազոտման էնպիսի բազա» արտահայտության յուրաքանչյուր բաղադրիչի հստակ նշանակությունը:

Բազան էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» բացատրվում է, որպես հիմնական, զլխավոր պահեստ<sup>1</sup>: Տվյալ դեպքում մենք գործ ունենք տեղեկատվական շտեմարանի հետ, որտեղ մեկտեղվում և համակարգված ձևով պահվում է նույնաբնույթ երևույթի մասին տեղեկատվություն:

Վերոնշյալ բառարանում էնպիսիզմ եզրույթի նշանակություններից մեկը բացատրվում է հետևյալ կերպ. «Միայն փաստերի նկարագրում կամ շարադրում՝ առանց գիտական ընդհանրացումների»<sup>2</sup>: Բազայում ներառված ֆիլմերի վերնագրերը կլինեն ակտիվ հղման ձևով, այսինքն դրանց վրա սեղմելով՝ կայքի այցելուները հնարավորություն կստանան ծանոթանալու ռեժիսորների, պրոդյուսերների, սցենարիստների, օպերատորների, կոմպոզիտորների և ֆիլմերի վրա աշխատած այլ անձանց գրառումներին՝ տվյալ ֆիլմի ստեղծման ընթացքում իրենց աշխատանքային փորձի մասին: Հենց այս հանգամանքով է պայմանավորված ֆիլմերի բազայի էնպիսի բնույթը:

«Կինո» բառը «կինեմատոգրաֆիա» եզրի կրճատ տարբերակն է: Կինեմատոգրաֆը բաղկացած է երկու արմատից՝ «կինեմա» (հունարենից թարգմանաբար նշանակում է շարժում) և «գրաֆի» (հունարենից թարգմանաբար նշանակում է գրել): Այսինքն կինեմատոգրաֆիան բառացի թարգմանաբար նշանակում է շարժումագրություն<sup>3</sup>:

«Դոկումենտալ» կամ «վավերագրական» եզրն ընդունված է ասել, որ առաջին անգամ որպես ֆիլմի բնորոշում, օգտագործել է շոտլանդացի վավերագրող և տեսաբան Ջոն Գրիքսոնը 1926թ.<sup>4</sup> ամերիկացի կինոռեժիսոր Ռոբերտ Ֆլաներթիի «Մոսնա» ֆիլմի մասին<sup>4</sup>: Գրիքսոնն այս տերմինը բացատրում էր որպես «իրականության ստեղծագործական մշակում»: Նա կարծում էր, որ իրականությունը դիտարկելու տեսախցիկի հնարավորությունը կարող է ծնել արվեստի նոր ձև, քանի որ ժամանակակից աշխարհը ցույց տալու համար «իրական դերասաններն» ու «իրական տեսարաններն» ավելի նախընտրելի են: Ռուս կի-

1 Է. Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 150

2 Նույն տեղում, էջ 393

3 Stbu՝ dic.academic.ru/dic.nsf/mas/кинematограф

4 Ann Curthoys, "Marilyn Lake Connected worlds: history in transnational perspective", Australian National University Press, Volume 2004, p. 151

նոռեժիսոր Ջիգա Վերտովը վավերագրական կինոյի սկզբունքն էր համարում «կյանքը ինչպես կա» կամ «հանկարծակիի բերված կյանքը» (жизнь врасплох): Ավելի ուշ ամերիկացի կինովավերագրող Փարե Լորենցը վավերագրական կինոն մեկնաբանեց որպես «փաստերի վրա հիմնված ֆիլմ, որը դրամատիկ է»: Յենսկեյով նախկինում եղած ձևակերպումների վրա, և հաշվի առնելով ժամանակի ընթացքում վավերագրական կինոյի ընկալման փոփոխությունները՝ կարելի է տալ հետևյալ սահմանումը. վավերագրական է կոչվում կինոյի այն տեսակը, որը որոշակի նյութը ներկայացնում է՝ հենվելով փաստերի վրա, և որտեղ բեմադրված, հորինված տեսարանները չեն ներկայացվում որպես փաստ կամ օբյեկտիվ իրականություն:

Ժամանակակից բառը կարող է ունենալ տարբեր ընկալումներ և մեկնաբանություններ: Սակայն այս դեպքում, քանի որ վերնագրում նշվում է ուսումնասիրվող նյութի որոշակի ազգային պատկանելությունը, պետք է տվյալ եզրի սահմանումը համաձայնեցնել այդ ազգային միավորի կամ նրա պետության ժամանակագրության հետ՝ չանտեսելով համաշխարհային գործընթացները: ԽՍՀՄ-ի կազմից Հայաստանի դուրս գալու տարեթիվը՝ 1991-ը, թերևս, կարելի է պայմանականորեն համարել ժամանակակից հայ կինոյի սկզբնակետ: Այս հարցում որոշիչ կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ 1990-ական թթ.-ին տեսանկարահանող սարքերն աստիճանաբար սկսեցին զանգվածային տարածում գտնել Հայաստանում:

Կինոարվեստը համամարդկային երևույթ է: Սակայն ըստ արծարծվող թեմաների և հեղինակների՝ ֆիլմերը դասակարգվում են նաև ըստ ազգային պատկանելության: Սա խիստ պայմանական է, որովհետև նույնիսկ նեղ էթնիկ-ազգային խնդիրների մասին պատմող ֆիլմը համամարդկային նշանակություն կարող է ունենալ: Այսպիսով, հայ կինո ասելով, նկատի ունենք այն ֆիլմերը, որոնք նկարահանվել են Հայաստանում կամ արծարծում են հայերին ու Հայաստանին առնչվող թեմաներ, կամ որոնց հեղինակները հայեր են:

Ժամանակակից հայ վավերագրական կինոյի հետազոտման էմպիրիկ բազային կից պետք է ստեղծվի նաև կինոգիտական ուսումնասիրությունների տեղեկատվական բազա, որտեղ կկուտակվեն վերջին 25 տարում հայ վավերագրական կինոյին առնչվող հայալեզու և օտարալեզու կինոգիտական գործերը:

Ժամանակակից հայ վավերագրական կինոյի հետազոտման կինոգիտական բազայի գոյությունն իմաստավորող գլխավոր առանձնահատկություններից պետք է լինի բովանդակության հասանելիությունը, քանի որ ներկայումս արվեստի ԲՈՒՀ-երի ուսանողներն ու արվեստի տեսաբաններն ուսումնասիրում են վավերագրական կինոյին վերաբերող առանձին թեմաներ, սակայն դրանք հիմնականում մնում են արխիվային մակարդակում և թեմայի նկատմամբ հետաքրքրվածություն ունեցող անձինք (կինեմատոգրաֆիստները, կինոգետները, լրագրողները և այլք) դրանց մասին կամ ընդհանրապես չեն իմանում, կամ էլ դժվար հասանելիության պատճառով չեն կարողանում ծանոթանալ դրանց հետ: Վերջին տարիներին տպագրվել են թեմային վերաբերող տարաբնույթ նյութեր, որոնք, սակայն, սահմանափակ քանակությամբ են, և տպագրվելուց հետո ստեղծված ֆիլմերը դրանցում գրանցել հնարավոր չէ: Այսինքն, տպագրվելուց կարճ ժամանակ անց, կամ հենց տպագրվելու պահին արդեն, դրանք մասնակիորեն կորցնում են իրենց արդիականությունն ու ամբողջականությունը: Գիտական պարբերականներն ու ՋԼՄ-ներն էլ ունեն ծավալային խնդիր, հետևաբար դրանց միջոցով ամբողջական ուսումնասիրությունը պոտենցիալ շահառուին հասցնելն իրատեսական և նպատակահարմար չէ:

Ֆիլմերի բազան պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝ ֆիլմի նույնականացման համարը բազայում, ֆիլմի վերնագիրը, ռեժիսորի ամբողջական անունը, դրանցում արծարծված թեմաները, գործող անձանց անունները, նկարահանման ոճը, մոտաժային ոճը, ֆիլմի ենթաժանրը, արտադրման երկիրն ու տարեթիվը, և հղում՝ ֆիլմի պաշտոնական կայքին կամ դրա մասին մանրամասն տեղեկություններ պարունակող այլ էջերի:

Ֆիլմերի բազա

Որոնում
Փնտրել:

Ֆիլմի համարը

Վերնագիրը

Ռեժիսորը

Թվականը

Անուններ

Ավարտանունն ունի

Մեծատառիկն ունի

Ֆիլմի ունի

Արտադրման երկիրը

Արտադրման տարիին

Կայքը

Ֆիլմի համարը	Վերնագիրը	Ռեժիսորը	Թվականը	Անուններ	Ավարտանունն ունի	Մեծատառիկն ունի	Ֆիլմի ունի	Արտադրման տարիին	Կայքը
11048	ԱՄՍՐԱՆՆ ԵՎ ԼԵՒԻ ՄԱԿԵՐԹՅԱՆ	Միշա Ղազարյան	2012	Արտադրման տարիին	2011	2012	www.filmsofame.am		
12593									
10583									
11084									
11788									
12224									
12326									
12013									
10901									
11781									
10460									

Կինոգիտական բազան պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝ նյութի նույնականացման համարը բազայում, վերնագիրը, հեղինակի անբողջական անունը, ուսումնասիրության մեթոդը, նյութի բնույթը, հրատարակման տարեթիվը, վայրը և հղումը:

Նյութերի հասանելիությունն ապահովելու համար կայքում պետք է լինի որոնողական հատուկ հարմարեցված համակարգ, որի միջոցով կարելի է ընտրողաբար դիտել, թե, օրինակ, 2008թ. ինչ դիմանկարային ֆիլմեր են նկարահանվել, կամ կոնկրետ որևէ կինոգետ պատմահամեմատական բնույթի ինչ ուսումնասիրություններ է արել 6 տարի առաջ և այլն:

«Թեմաները» բաժնում կայքի այցելուները կարող են ընտրել առաջարկված ցուցակից իրենց հետաքրքրող թեման, այդ թվում՝ արվեստի, ցեղասպանության, գրականության, կենդանիների, արհեստների և այլնի մասին:

Գործող անձանց անունները բաժնում ևս հնարավոր կլինի ընտրել անուններ: Այստեղ տեղակայված կլինեն ոչ միայն ֆիլմերում երևացող անձանց անունները, այլև անձնակազմի անդամների: Օրինակ՝ եթե փնտրում ենք «Արման» անունը, «որոնման արդյունքներ» բաժնում ցուցադրվում են բոլոր այն ֆիլմերը, որոնց անձնակազմից կամ որում նկարահանված անձանցից մեկի անունը Արման է:

«Նկարահանման ոճը» բաժնում ֆիլմերը կդասակարգվեն ըստ հետևյալ ոճերի՝ թաքնված, սիրողական, բնանկարային, ինտերյերային, գիշերային նկարահանումներ, դիտարկող, քայլող, անշարժ, սուբյեկտիվ տեսախցիկ և այլն:

«Մոնտաժային ոճը» դասակարգման միջոցով հնարավոր կլինի փնտրել ֆիլմերը՝ ըստ հետևյալ բաժանման՝ դինամիկ, գծային, ոչ գծային, շարունակական, խզված, վերլուծական, ռիթմային, գրաֆիկական (**գծային, ուրվագծային/կադապարային, խորքային, դիտանկյունային, շարժման ուղղությամբ և արագությամբ, երանգային հակադրությամբ**), տարածքային, ժամանակային (հիշողություն, կանխագագացում- Flashbacks, flash-forwards), ուղղահայաց, ինտելեկտուալ, զգայական կամ ասոցիատիվ մոնտաժ և այլն:

Ֆիլմերի բազայի որոնողական համակարգի «Նկարահանման ոճը» բաժնում կլինի հետևյալ դասակարգումը՝ պոետիկ, գիտահանրամատչելի, ուսուցողական, դիմանկարային, ճանապարհորդական, դիտարկում, մասնակցային, համը, մոքումենտարի<sup>5</sup>, վավերախաղարկային (docufiction) և այլն:

Կինոգիտական բազայի «ուսումնասիրության մեթոդը» բաժնում պետք է լինեն հետևյալ դասակարգումները՝ վերլուծական, նկարագրական, ձևաբանական, տիպաբանական, պատմա-համեմատական, պատմա-փաստագրական, համեմատական-վերլուծական, կիրառական, վիճակագրական, նշանագիտական, սոցիոլոգիական:

Ըստ նյութի բնույթի՝ կլինեն հետևյալ բաժանումները՝ գիրք, լրագրողական հոդված, վերլուծություն, հարցազրույց, դիպլոմային աշխատանք, գիտական հոդված, մագիստրոսական թեզ, ատենախոսություն:

Ժամանակակից հայ վավերագրական կինոյի հետազոտման էմպիրիկ և դրան կից կինոգիտական բազաները կարող են օգտագործվել նաև մասնագիտական կրթության բուհերում, քանի որ այստեղ հրապարակված նյութը կլինի ճշգրիտ և դասավանդողի համար արժանահավատ: Յետևաբար, համապատասխան թեմաները դասապրոցեսի շրջանակներում ուսումնասիրելիս կարելի է նախապես ուսանողին հանձնարարել ինքնուրույն վերլուծական աշխատանք անել բազայում եղած տեղեկատվության հիման վրա: Դա կարող է բարձրացնել ուսանողի ակտիվ մասնակցության մակարդակը ուսումնական գործընթացում:

Վերոնշյալ բազաների, մասնավորապես՝ կինոգիտական բազայի ստեղծմամբ կարող է մեծանալ գրագողության վտանգը: Սակայն դասավանդողը ևս հասանելիություն կունենա նյութին և հնարավորություն՝ համեմատելով ստուգելու ուսանողի ինքնուրույն աշխատանքի չափը:

Նման բազաներ գործում են տարբեր երկրներում: Տվյալ դեպքում օրինակը վերցված է Եվրոպական հանձնաժողովի մեդիա ծրագրի կայքից: Սակայն այնտեղ ֆիլմերի շտեմա-

<sup>5</sup> Անգլերեն mock (ծաղրել, կեղծել, ձևացնել) և documentary (փաստաթղթերի վրա հիմնված) բառերի համադրությունը:

րանում բացակայում են թեմաների, գործող անձանց անունների, նկարահանման ոճի, մոնտաժային ոճի, ֆիլմի ենթաժանրի վերաբերյալ բաժինները, վերնագրերը ակտիվ հղման ձևով չեն և աղյուսակի պարունակությունից բացի հավելյալ տեղեկատվություն չի տրամադրվում: Իսկ կինոգիտական բազան ընդհանրապես բացակայում է այդ կայքում: Հայկական կայքերից տեղեկատվական-որոնողական մանատիպ գործառույթ ունի «Ոսկե Ծիրան» կինոփառատոնի պաշտոնական կայքը. առանձին դասակարգված են հայկական վավերագրական ֆիլմերը, սակայն այստեղ պատկերը չի կարող ամբողջական լինել, քանի որ գրանցված են միայն փառատոնին մասնակցած ֆիլմերը:

Եզրակացություններ

- Հայ ժամանակակից կինոյի ուսումնասիրության նպատակով անհրաժեշտ է ի մի բերել վերջին 25 տարում նկարահանված ֆիլմերի մասին տեղեկատվությունը և դրանց վերաբերյալ կինոգիտական վերլուծությունները:

- Հավաքված տեղեկության համակարգման նպատակով ստեղծել տեղեկատվական երկու շտեմարան՝ ֆիլմերի վերաբերյալ տեղեկությունների և կինոգիտական:

- Հավաքված տեղեկությունները մասնագիտական շրջանակների համար ավելի հասանելի դարձնելու նպատակով՝ ստեղծված բազաները տեղադրել համապատասխան կայքում՝ ազատ մուտքով:

СЕРГЕЙ КИРАКОСЯН

#### **ЭМПИРИЧЕСКАЯ БАЗА СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ДОКУМЕНТАЛЬНОГО КИНО РЕЗЮМЕ**

Для исследования современного армянского документального кино необходимо собирать все эмпирические и киноведческие материалы, которые накопил армянское документальное кино за последние 25 лет. Для сохранения этих материалов в этой статье предлагается создать эмпирические и киноведческие базы данных. В статье представлены какими принципами должны быть выбраны материалы и с какими классификациями они должны храниться, чтобы быть более доступным.

SERGEY KIRAKOSYAN

#### **EMPIRICAL DATABASE OF ARMENIAN CONTEMPORARY DOCUMENTARY CINEMA SUMMARY**

For the research of Armenian contemporary documentary cinema it's necessary to collect empirical and cinematological all the materials that has accumulated Armenian documentary cinema over the past 25 years. For storing the information it's proposed in this article to establish empirical and cinematological databases. It's specified in the article through what principles materials should be selected and and how they must be classified to be more accessible.